



ԳԱՌՆԻԻ ՍԵՅՍՄԻԿ ԴԻՏԱԿԱՅԱՆԸ ԳԼՈՐԱԼ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ՑԱՆՑՈՒՄ

Հայաստանի Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը (Հայաստանի ՄՊԱԾ) դիտարկում է մոտ 40 երկրաֆիզիկական, երկրաքիմիական, հիդրոքիմիական, էլեկտրամագնիսական և այլ պարամետրեր՝ ազգային դիտացանցով, որը ներառում է շուրջ 150 կայան: Մոնիթորինգի համակարգերը ներգրավված են գլոբալ IRIS, READINESS, GPS և CTBTO և COSMOS ցանցերում, որոնք հնարավորություն են տալիս փոխել և փարածել սեյսմիկ վրանգի վերաբերյալ տվյալները: Երկրաֆիզիկական պարամետրերը ներառում են՝ 13 սեյսմիկ կայան, 18 վերգերնյա ցնցումներ արձանագրող կայաններ և 32 հեռահար սեյսմիկ կայան (Նկ. 1):



Նկ. 1. Գառնիի սեյսմիկ կայանի արձանագրող սարքերը:

Հայաստանի Հանրապետության սեյսմիկ դիտացանցը ներառում է 4 կայան:

- Տարածաշրջանային սեյսմիկ ցանց (Այն սրեղծվել է 1960-ականների վերջին):

- Տեղական հեռաչափական սեյսմիկ ցանց. «Գյումրի», «Վանաձոր», «Երևան», «ԱԷԿ» և «Կապան» կենտրոններով:

- Գլոբալ Սեյսմոգրաֆիական Մոնիթորինգի համակարգի IRIS GSN ցանց.

Ցանցի IRIS GNI կայանը տեղադրվել է 1991 թվականին Գառնիի երկրաֆիզիկական աստղադիտարանում և արդիականացվել 2010 թվականին:

- Փոքրածավալ կայանների ցանց Վայք քաղաքի մերձակայքում (Նկ. 2):

Նկ. 2. Վայքի փոքրածավալ սեյսմոգրաֆիական կայանը



Վայքի Սեյսմոգրաֆիական կայանը տեղադրվել է միջազգային CEA/DASE-համակարգի հետ համատեղ: Այն գրնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Վայք քաղաքի մերձակայքում: Առաջին սեյսմիկ տվյալները կայանից ստացվել են 2010 թվականի հունվարին: Սեյսմոգրաֆիական կայանների ցանցը բաղկացած է 6 դիտակետից, որոնք գրնվում են մեկ կենտրոնական տեղանքով երկու համակենտրոն շրջանակների մեջ: Ներկայումս կայանը հիմնականում աշխատում է մոնիթորինգի թեստային ռեժիմով: Սեյսմոգրաֆիական ցանցը (GSN) տրամադրում է սեյսմոգրաֆիկ տվյալներ երկրաշարժերի վրանգի մեղմացման և Համապարփակ միջուկային փորձարկումների արգելման միջազգային պայմանագրի (CTBT) ստուգման համար: (Աղբյուրը՝ *Seismic Observation and Seismicity of Armenia*):